

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԲԱԺՆԻ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Մագիստրատուրայի Բաժինը (հետագայում Բաժինը) մագիստրատուրայում ուսուցումը և գիտահետազոտական աշխատանքները կազմակերպող կառուցվածքային ստորաբաժանում է, որը միավորում է մագիստրատուրայի ուսումնագիտական համակարգի բոլոր մասնագիտությունները:

Բաժինը ստեղծվել է ՀԳԱ-ի (ներկայումս ՀԱԱՀ–ի) ռեկտորի N 291/կ, 31.07.98թ. հրամանով, հիմք ընդունելով ՀԳԱ (ներկայումս ՀԱԱՀ) 1998 թվականի հուլիսի 29–ի ռեկտորատի նիստի N 58 արձանագրությունը և ՀԳԱ (ներկայումս ՀԱԱՀ) 1998 թվականի հուլիսի 30-ի գիտական խորհրդի նիստի N8 արձանագրությունը:

Բաժնի իրավասությունները և գործունեության սկզբունքները որոշվում և կարգավորվում են համալսարանի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքով:

Մագիստրատուրայում ուսումնագիտական աշխատանքի կազմակերպման հետ առնչվող, բոլոր հարցերը կարգավորվում են Բաժին-ամբիոն հարաբերության սկզբունքներով:

Բաժինը՝

Պլանավորում է ուսումնագիտական գործընթացը, ըստ մասնագիտությունների կազմակերպում է մագիստրատուրայի ընթացիկ և ամփոփիչ ատեստավորումը: Ուսումնական, գիտական, ուսումնամեթոդական և կազմակերպչական գործունեությունը իրականացնում է համապատասխան ֆակուլտետների և

ամբիոնների հետ համատեղ: Փոխադարձ կապերի միջոցով իրականացնում է համատեղ կրթական, գիտական և ուսումնամեթոդական ծրագրեր:

Միջոցառումներ է մշակում մագիստրոսական համակազմի համալրման ուղղությամբ, սահմանված կարգով կազմակերպում է դիմորդների ընդունելությունը մագիստրատուրա:

Առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին մագիստրանտներին կուրսից կուրս փոխադրման, ազատման, ակադեմիական արձակուրդի ձևակերպման, կրկնական ուսուցման, մի մասնագիտությունից մյուսը տեղափոխման և նրանց իրավունքների վերականգնման վերաբերյալ:

Մասնագիտական որակավորման բնութագրերին համապատասխան, մագիստրատուրայի համար կազմված ցերեկային և հեռակա ուսուցման ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը ֆակուլտետային մեթոդական խորհրդներում քննարկվելուց հետո ներկայացնում է մագիստրատուրայի գիտամեթոդական խորհուրդ, ըստ սահմանված կարգի քննարկելու և հաստատելու համար:

Ներկայացնում է առաջարկություններ մագիստրատուրայում դասավանդելու համար հրավիրվող պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերաբերյալ, կազմակերպում է համապատասխան պայմանագրերի ձևավորման գործընթացը:

Ձևավորվում է իր տարեկան ֆինանսական նախահաշվի նախագիծը և սահմանված կարգով ներկայացնում ռեկտորատի հաստատմանը:

Իրականացնում է մագիստրատուրայի ուսումնամեթոդական փաստաթղթերի պատրաստման և համապատասխան կարգով հաստատման ներկայացնելու գործընթացը, առաջարկություններ է ներկայացնում մագիստրոսական մասնագիտությունների համար անհրաժեշտ ուսումնական, մեթոդական, գիտական գրականության ստեղծման և ձեռքբերման վերաբերյալ:

Կազմակերպում է շրջանավարտների մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությունների անցկացման գործընթացը:

Մագիստրատուրայի կառավարման մարմինը գիտամեթոդական խորհուրդն է, որի որոշումները ռեկտորի հրամանով հաստատվելուց հետո ենթակա են պարտադիր կատարման:

Մագիստրատուրայի գիտամեթոդական խորհուրդը ձևավորվում է ռեկտորի հրամանով, ոչ ավելի քան 9 անդամից, 2 տարի ժամկետով: Գիտամեթոդական խորհրդի կազմում ընդգրկվում են ՀԱԱՀ-ի թողարկող ամբիոնների վարիչներ, անվանի պրոֆեսորներ, ռեկտորի կողմից հրավիրված ներկայացուցիչներ:

Գիտամեթոդական խորհուրդը նիստեր է գումարում ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստեր կարող են գումարվել ռեկտորի կամ բաժնի վարիչի նախաձեռնությամբ, ինչպես նաև գիտամեթոդական խորհրդի կազմի 2/3-ի պահանջով:

Գիտամեթոդական խորհուրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստը իրավագոր է, եթե մասնակցում են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

Մագիստրատուրայի գիտամեթոդական խորհուրդը՝

Առաջարկություններ է ներկայացնում համալսարանի գիտական խորհրդին և ռեկտորատին մագիստրատուրայում կառուցվածքային փոփոխությունների, հաստիքների բացման, վերակառուցման կամ լուծարման վերաբերյալ:

Քննարկում և սահմանված կարգով հաստատման է ներկայացնում ուսումնական պլանները, առարկաների ուսումնական ծրագրերը, հրատարակության է երաշխավորում ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկները: Քննարկում և հաստատում է մագիստրատուրայի դասախոսների աշխատանքային անհատական պլանները և ընդունում հաշվետվությունները:

Առաջարկություն է ներկայացնում մագիստրատուրայում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի թեկնածությունների, այլ բուհերի մասնագետների հրավիրման, պաշտոններում առաջադրման, պայմանագրերի վերակնքման և այլ հարցերի վերաբերյալ:

Քննարկում է մագիստրատուրայի ուսումնական, ուսումնամեթոդական կազմակերպչական, գիտական գործունեությունը և կադրերի պատրաստմանն ու որակավորմանն առնչվող հարցերը:

Առաջարկություններ է ներկայացնում ռեկտորատին մագիստրատուրայում մասնագիտությունների (մասնագիտացումների) բացման ու լուծարման վերաբերյալ: Քննարկում և որոշումներ է ընդունում բաժնի գործունեությանը առնչվող այլ հարցերի վերաբերյալ:

Մագիստրատուրայի բաժինը ղեկավարում է բաժնի վարիչը, որը ըստ սահմանված կարգի ընտրվում է ՀԱԱՀ-ի գիտական խորհուրդում և հրամանագրվում ռեկտորի կողմից: Իր գործունեությամբ նա հաշվետու է համալսարանի ռեկտորին :

Բաժնի վարիչը՝

Ղեկավարում է բաժնի ուսումնական, դաստիարակչական աշխատանքը և համակարգում մեթոդական ու գիտական գործունեությունը:

Ներկայացնում է բաժինը այլ կազմակերպություններում և հաստատություններում:

Ղեկավարում է մագիստրատուրայի գիտամեթոդական խորհուրդը: ՀԱԱՀ գիտական խորհրդի և ռեկտորատի անդամ է:

Իրականացնում է հսկողություն բաժնի ուսումնագիտական գործընթացի, մագիստրոսական համակազմի ինքնուրույն աշխատանքների նկատմամբ:

Կազմակերպում և անցկացնում է ուսումնամեթոդական և գիտամեթոդական խորհրդակցություններ:

Կազմակերպում է մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության, գրախոսման ուղարկման, ավարտական գործընթացի ժամանակացույցերի ձևավորման աշխատանքները: Մագիստրատուրայի պետական որակավորման հանձնաժողովի անդամ է:

Ընդհանուր դրույթներ՝

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մագիստրոսական ուսուցման կազմակերպումը և համակարգումը իրականացվում է մագիստրատուրայի բաժնում: Մագիստրոսները պատրաստվում են հիմնականում գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության կողմնորոշմամբ:

Մագիստրոսական ուսուցումը ՀԱԱՀ-ում կազմակերպվում է ՀՀ Կառավարության և ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված մասնագիտությունների անվանացանկի համաձայն, ցերեկային և հեռակա ուսուցման ձևերով:

Մագիստրոսական ուսուցումը եռաստիճան կրթական համակարգի երկրորդ աստիճանն է՝ մինչև 2 տարի ցերեկային և մինչև 2,5 տարի հեռակա ուսուցման տևողությամբ, որի ընթացքում մագիստրանտները տիրապետում են տեսական և

պրակտիկ-կիրառական խորը գիտելիքներին ընտրած մասնագիտության շրջանակներում:

Մագիստրոսական բոլոր որակավորումներում պահանջները և ուսումնագիտական աշխատանքի բովանդակությունը համապատասխանեցված են միջազգային ընդունված չափորոշիչներին, որը շրջանավարտներին հնարավորություն է ընձեռնում հետագայում ուսումը շարունակելու ցանկացած ԲՈՒՀ-ում:

Մագիստրոսական ուսուցումը ավարտվում է մագիստրոսական ատենախոսության պաշտպանությամբ և տվյալ մասնագիտության գծով մագիստրոսի աստիճանի շնորհմամբ, որի համար տրվում է համապատասխան դիպլոմ:

Ընդունելության պայմանները՝

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մագիստրատուրա կարող են ընդունվել անձինք, ովքեր հաջողությամբ ավարտել են բարձրագույն կրթության լրիվ ծրագիրը հայտարարված մասնագիտությունների, կամ դրանց հարակից մասնագիտությունների գծով և ստացել բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության պետական նմուշի դիպլոմ:

Ընդունելության կանոններն ու պայմանները որոշվում են ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքով, սույն կանոնակարգով և ՀԱԱՀ գիտ. խորհրդի կողմից հաստատված մագիստրատուրայի ընդունելության տիպային կանոնակարգով (տես մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգը):

Մագիստրոսի ուսումնագիտական ծրագրին ներկայացվող ընդհանուր պահանջները:

Մագիստրանտի ուսումնագիտական ծրագրին ներկայացվող ընդհանուր պահանջները որոշվում են պետական կրթական չափորոշիչներով:

Ծրագիրն իրականացվում է ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված, կրեդիտային համակարգի չափանիշներին համապատասխան կազմված և հաստատված ուսումնական պլանների համաձայն, որոնցում նախատեսված են հումանիտար, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական (մասնագիտացում) կրթաբլոկների պարտադիր և ընտրովի

միջանցիկ դասընթացները: Յուրաքանչյուր մագիստրոսական մասնագիտության ուսումնական պլան ներառում է 70-120 կրեդիտ, յուրաքանչյուր 1 կրեդիտին համապատասխանում է 30 ժամ / լսարանային և ինքնուրույն/:

Մագիստրոսական մասնագիտական կրթական ծրագիրը բաղկացած է երկու հիմնամասերից՝ կրթական և հետազոտական: Ծրագրի կրթական մասը կոչված է ձևավորել պետական կրթական չափորոշիչում ներկայացված մասնագիտական և մանկավարժական որակներ և կարողություններ: Հետազոտական աշխատանքի բովանդակությունը որոշվում է մագիստրանտի և նրա գիտական ղեկավարի կողմից համատեղ կազմված և համապատասխան ամբիոնի նիստում հաստատված անհատական պլաններով: Մագիստրոսի գիտական ղեկավարը պետք է ունենա գիտական աստիճան և պրոֆեսորի կամ դոցենտի կոչում:

Մագիստրանտներին մագիստրոսական ատենախոսության թեմաները հանձնարարվում և գիտական ղեկավարները նշանակվում են ՀԱԱՀ ռեկտորի հրամանով՝ նախապես համապատասխան թողարկող ամբիոնների և ֆակուլտետների նիստերում քննարկվելուց և մագիստրատուրայի գիտամեթոդական խորհրդի նիստերում հաստատվելուց հետո:

Մագիստրանտների գիտական գործունեությունը վերահսկվում է համապատասխան թողարկող ամբիոններում յուրաքանչյուր կիսամյակը մեկ իրականացվող ատեստավորումների միջոցով, ՀԱԱՀ ռեկտորի հրամանով ստեղծվող ատեստացիոն հանձնաժողովի մասնակցությամբ՝ նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն:

Համապատասխան որակավորման շրջանակներում մասնագիտացումն իրականացվում է, որպես կանոն, ընտրովի դասընթացների, գիտական սեմինարների և առավելապես մագիստրոսական ավարտական թեզի կատարման միջոցով: Առանձնացված ուսումնական խմբի առկայության դեպքում՝ մասնագիտացում կարող է իրականացվել տվյալ մասնագիտության ուսումնական պլանի տարանջատված տարբերակի համաձայն:

Մագիստրոսական կրթությունը իրականացվում է ցերեկային (արտադրությունից կտրված) և հեռակա ուսուցման ձևերով:

Ուսուցման գործընթացում առավել մեծ տեղ է հատկացվում մագիստրանտի ինքնուրույն հետազոտական աշխատանքին: Լսարանային բեռնվածությունը չպետք

է գերազանցի շաբաթական քսան ժամը: Նախատեսվում է ընթացիկ ատեստավորում բոլոր առարկաներից: Մագիստրոսական ծրագրի յուրացման ամբողջ ընթացքում կիսամյակային քննությունների քանակը սահմանվում է չորսից ոչ ավելի:

Մագիստրատուրայի ուսումնական պլանները, համապատասխան մեթոդական փաստաթղթերի փաթեթը, քննությունների և ստուգարքների ցանկը մշակվում են ֆակուլտետների աշխատանքային խմբերի կողմից և ներկայացվում են մագիստրատուրայի գիտամեթոդական խորհրդին, որի որոշման հիման վրա դրանք ներկայացվում են ՀԱԱՀ մեթոդական և գիտական խորհուրդների հաստատմանը:

Մագիստրոսական ուսուցման եզրափակիչ ատեստավորում՝

Մագիստրոսական ուսուցման եզրափակիչ կիսամյակում նախատեսվում է ավարտական աշխատանքի՝ մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն: Մագիստրոսական ավարտական ատենախոսությունը համարվում է ինքնուրույն գիտական հետազոտություն, որը կատարվում է գիտական ղեկավարի ղեկավարությամբ և պաշտպանության է թույլատրվում ՀԱԱՀ-ից դուրս, համապատասխան բնագավառի մասնագետների գրախոսումն անցնելուց հետո: Ավարտական ատենախոսության պաշտպանությունը իրականացվում և գնահատվում է պետական որակավորման հանձնաժողովի կողմից:

Գերազանց առաջադիմությամբ համապատասխան որակավորման մագիստրոսի աստիճանի շրջանավարտները ասպիրանտուրայի ընդունելության տեղերի սահմանափակ լինելու դեպքում, մրցույթում ստանում են առաջնահերթություն: